HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ECOLUR
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY

ՄԱԿ-Ի ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ COP17-ԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

«ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի 17-րդ համաժողովին (CBD COP17) քաղաքացիական հասարակության մասնակցության» ուղեցույցը պատրաստվել է «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից՝ Հայնրիխ Բյոլ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ իրականացվող «Քաղաքացիական հասարակության առաջնորդության և կենսաբազմազանության կառավարման ամրապնդումը՝ Հայաստանում կայանալիք COP17-ի նախօրեին» ծրագրի շրջանակներում:

Երևան, 2026թ.

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին ցուցաբերած աջակցության համար, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել «ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի 17-րդ համաժողովին (CBD COP17) քաղաքացիական հասարակության մասնակցության» ուղեցույցի պատրաստումը: Կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում նաև ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի COP17-ի Կանաչ գոտու պատասխանատու Լիլիթ Միդոյանին և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի՝ ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի COP17-ի ավագ խորհրդատու Ալլա Ալեքսանյանին տրամադրած խորհրդատվության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ 5

2.1 ՄԱԿ-ի CBD-ին կից արձանագրություններ 6

2.2 Ինչպես է աշխատում CBD-ն 7

2.3. Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակ 8

2.4 CBD-ի օժանդակ և հիմնական մարմինները 12

3. COP-Ի ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 14

3.1 COP-ի որոշումների կայացման գործընթացը 14

3.2. Ովքեր են մասնակցում COP-ին և ինչ ձևաչափով 15

3.3 Կապույտ և Կանաչ գոտիներ 15

4. ԵՐԵՎԱՆՅԱՆ CBD COP17 18

4.1 Ինչ կքննարկվի երևանյան CBD COP17-ում 19

4.2 Երևանյան CBD COP17-ին մասնակցության համար գրանցում և հավատարմագրում 25

5. ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ 28

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԿԱՌԳԾ - Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագիր

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն

ՔՀԿ - քաղաքացիական հասարակական կազմակերպություն

COP- Conference of the Parties/կողմերի համաժողով

SBSTTA - Subsidiary Body on Scientific, Technical and Technological Advice/Գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվության օժանդակ մարմին

CBD - Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա

SBI - Subsidiary Body on Implementation/Իրականացման հարցերով օժանդակ մարմին

SB8J - Subsidiary Body on Article 8(j) and Other Provisions of the Convention Related to Indigenous Peoples and Local Communities/Կոնվենցիայի 8(j) հոդվածի և բնիկ ժողովուրդների ու տեղական համայնքների վերաբերյալ այլ դրույթների օժանդակ մարմին

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցի նպատակն է բարձրացնել քաղաքացիական հասարակության իրազեկվածությունը ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի 17-րդ համաժողովի (այսուհետ՝ CBD COP17) վերաբերյալ՝ տրամադրելով CBD COP17-ի նշանակության, կազմակերպման և մասնակցության վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն:

Ուղեցույցը ներկայացնում է CBD-ի նպատակները, արձանագրությունների, Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակի նշանակությունը, Կոնվենցիայի հիմնական կառավարման և օժանդակ մարմինների գործառույթները, COP-ի նշանակությունը, մասնակցության ընթացակարգերը, գրանցման եղանակները, Հայաստանում անցկացվելիք CBD COP17-ի նախնական օրակարգը և մասնակցության ձևաչափերը:

Որպես աշխատանքային գործիք՝ ուղեցույցը կնպաստի CBD COP17-ին քաղաքացիական հասարակության տեղեկացված մասնակցությանը:

2. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՄԱԿ-ի CBD-ն[1] [2] ընդունվել է 1992 թ. մայիսի 22-ին՝ Նայրոբիում (Քենիա) և պաշտոնապես բացվել ստորագրման համար նույն թվականի հունիսի 5-ին՝ Ռիո դե Ժանեյրոյի «Երկիր» գագաթնաժողովում: Այն ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 29-ին:

Կոնվենցիայի նպատակներն են.

- **կենսաբանական բազմազանության պահպանում**
- **կենսաբանական բազմազանության բաղադրիչների կայուն օգտագործում**
- **գենետիկական ռեսուրսների օգտագործումից բխող օգուտների արդար և հավասար բաշխում**

[1] https://www.arlis.am/hy/acts/77820
[2] https://www.cbd.int/convention

Կոնվենցիային միացել է 196 երկիր:

Փաստ 1.

Հայաստանը CBD-ն ստորագրել է 13.06.1992թ. և վավերացրել 31.03.1993թ.:

Նկար 1. Հայաստանյան բնապատկեր

2.1 ՄԱԿ-ի CBD-ին կից արձանագրություններ

CBD-ին կից արձանագրություններն ընդունվել են՝ լրացնելու CBD-ի հիմնական նպատակները, կարգավորելու կենսատեխնոլոգիայի հետ կապված ռիսկերը և կանխելու կենսառեսուրսների անօրինական շահագործումը:

- **«Կենսաբանական անվտանգության մասին» Կարթագենայի արձանագրություն**

Նպատակն է ապահովել ժամանակակից կենսատեխնոլոգիայից (որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման նկատմամբ) բխող կենդանի վերափոխված օրգանիզմների անվտանգ փոխանցման, մշակման և օգտագործման ոլորտում պաշտպանության համապատասխան մակարդակ՝ հաշվի առնելով նաև մարդկանց առողջությանը սպառնացող վտանգը, հատուկ ուշադրություն դարձնելով անդրսահմանային փոխադրումներին[3]:

- **«Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդար ու հավասար հիմունքներով համօգտագործման մասին» Նագոյայի արձանագրություն**

Նպատակն է ապահովել գենետիկական պաշարների օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար բաշխումը:

[3] https://www.arlis.am/hy/acts/24407

Փաստ 2.
Հայաստանը վավերացրել է Կարթագենայի և Նագոյայի արձանագրությունները:

Նկար 2. Արևահամ արքայանարնջի չրի վարագույր ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում

2.2 Ինչպես է աշխատում CBD-ն

CBD-ն աշխատում է հետևյալ հիմնական մեխանիզմների միջոցով.

- **Կողմերի համաժողով (COP)**

Անդամ պետությունները պարբերաբար հավաքվում են՝ գնահատելու առաջընթացը և ընդունելու նոր գլոբալ ռազմավարություններ ու իրավական պարտավորություններ:

- **Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագիր (ԿԱՌԳԾ)**

Յուրաքանչյուր երկիր մշակում է իր ներքին ռազմավարությունը կամ ազգային գործողությունների ծրագիրը՝ կենսաբազմազանության պահպանման նպատակները սեփական քաղաքականության և ծրագրերի մեջ ինտեգրելու համար: Երկրները Կոնվենցիայի քարտուղարություն են ներկայացնում ազգային զեկույց, որում մանրամասն ներկայացվում է, թե տվյալ պետությունն ինչպիսի առաջընթաց է գրանցել ԿԱՌԳԾ-ի

թիրախների իրագործման ճանապարհին: 7-րդ ազգային զեկույցները երկրները պարտավոր էին ներկայացնել մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը[4]:

- **Գլոբալ շրջանակներ**

Կոնվենցիան սահմանում է հստակ կատարողական թիրախներ (օրինակ՝ պահպանվող տարածքների ընդլայնում և ապօրինի որսի, աղտոտման կրճատում), որոնց երկրները ձգտում են հասնել որոշակի ժամկետներում:

2.3. Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակ

Մոնրեալում կայացած CBD-ի COP15-ի ժամանակ ընդունվել է Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակը[5]:

Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի գլխավոր նպատակն է կանգնեցնելու Երկիր մոլորակի կենսաբազմազանության աղետալի կորուստը և վերականգնել այն: Գլոբալ շրջանակը միտված է հասնելու Երկիր մոլորակի ցամաքի, քաղցրահամ ջրերի և օվկիանոսների առնվազն 30%-ի արդյունավետ պահպանմանն ու կառավարմանը:

Նկար 3. ՀՀ Լոռու մարզի Դեբետ բնակավայրը՝ շրջապատված անտառներով

Փաստ 3.

Հայաստանն աշխարհի կենսաբազմազանության 36 թեժ կետերից մեկն է:

Շրջանակի տեսլականը և առաքելությունը

[4] https://ort.cbd.int/national-reports
[5] https://www.cbd.int/gbf

Շրջանակի 2050 թվականի տեսլականն է ապրել բնության հետ ներդաշնակ աշխարհում, որտեղ. «Մինչև 2050 թվականը կենսաբազմազանությունը գնահատվում, պահպանվում, վերականգնվում և խելամտորեն է օգտագործվում՝ պահպանելով էկոհամակարգային ծառայությունները, ապահովելով առողջ մոլորակ և բոլոր մարդկանց համար կենսական նշանակություն ունեցող օգուտներ»:

Շրջանակի 2030 թվականը ներառող ժամանակահատվածի առաքելությունը, որը միտված է 2050 թվականի տեսլականի իրականացմանը, հետևյալն է. «Ձեռնարկել հրատապ գործողություններ՝ կենսաբազմազանության կորուստը կասեցնելու և շրջելու նպատակով, որպեսզի բնությունը վերադառնա վերականգնման ուղի՝ ի շահ մարդկանց և մոլորակի, կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման, ինչպես նաև գենետիկական ռեսուրսների օգտագործումից ստացվող օգուտների արդար և հավասար բաշխման ապահովման միջոցով՝ միաժամանակ տրամադրելով իրականացման համար անհրաժեշտ միջոցներ»:

Շրջանակն ունի 4 նպատակ 2050 թվականի համար և 23 թիրախ 2030 թվականի համար:
Նպատակներն են՝[6]

1) **Պաշտպանել և վերականգնել**
   - Բոլոր էկոհամակարգերի ամբողջականությունը, կապակցվածությունը և դիմակայունությունը պահպանվում, ուժեղացվում կամ վերականգնվում են մինչև 2050 թվականը՝ էապես մեծացնելով բնական էկոհամակարգերի տարածքը:
   - Մարդկային գործունեությամբ պայմանավորված՝ հայտնի վտանգված տեսակների անհետացումը կասեցվում է, իսկ մինչև 2050 թվականը բոլոր տեսակների անհետացման տեմպը և ռիսկը նվազեցվում են տասնապատիկ անգամ, և բնիկ վայրի տեսակների թվաքանակը հասցվում է առողջ և դիմակայուն մակարդակի:
   - Վայրի և ընտելացված տեսակների պոպուլյացիաների ներսում գենետիկական բազմազանությունը պահպանվում է՝ ապահովելով նրանց հարմարվողական ներուժի պահպանումը:

[6] https://www.cbd.int/gbf/goals

Նկար 4. Հայկական որոր՝ գրանցված ՀՀ Կարմիր գրքում

Փաստ 4.

Հայաստանի բացառիկ կենսաբազմանությունը

- ✓ 3800+ անոթավոր բուսատեսակ
- ✓ 17,000+ կենդանատեսակ
- ✓ 144 էնդեմիկ բուսատեսակ
- ✓ 500+ էնդեմիկ կենդանատեսակ
- ✓ 10 լանդշաֆտակլիմայական գոտի

2) Բարգավաճել բնության հետ ներդաշնակ

- Կենսաբազմազանությունը կայուն կերպով օգտագործվում և կառավարվում է, իսկ բնության ներդրումները մարդկանց բարեկեցության համար, ներառյալ էկոհամակարգերի գործառույթներն ու ծառայությունները, գնահատվում, պահպանվում և բարելավվում են: Ներկայում նվազման միտում ունեցող այդ ներդրումներն ու ծառայությունները վերականգնվում են՝ նպաստելով մինչև 2050 թվականը կայուն զարգացման նպատակների իրագործմանը՝ ի շահ ներկա և ապագա սերունդների:

3) Արդարացիորեն բաշխել օգուտները

- Գենետիկական ռեսուրսների, գենետիկական ռեսուրսների վերաբերյալ թվային հաջորդականության տեղեկատվության (Digital Sequence Information, DSI), ինչպես նաև գենետիկական ռեսուրսների հետ կապված ավանդական գիտելիքների օգտագործումից ստացվող դրամական և ոչ դրամական օգուտները, ըստ կիրառելիության, արդար և հավասարաչափ բաշխվում են, ներառյալ՝ համապատասխան դեպքերում բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների հետ: Մինչև 2050 թվականն այդ օգուտները զգալիորեն ավելանում են՝ միաժամանակ ապահովելով գենետիկական ռեսուրսների հետ կապված ավանդական գիտելիքների պատշաճ պաշտպանությունը: Այս ամենը նպաստում է կենսաբազմազանության պահպանմանն ու կայուն օգտագործմանը՝ միջազգային

մակարդակով համաձայնեցված հասանելիության և օգուտների բաշխման գործիքներին համապատասխան:

Փաստ 5.
Հայաստանը վայրի ցորենի հայրենիքն է:

Նկար 5. Վայրի ցորենի 3 տեսակ պահպանվում է ՀՀ Էրեբունի արգելոցում

4) Ներդնել և համագործակցել

- Իրականացման համար անհրաժեշտ և բավարար միջոցները, ներառյալ ֆինանսական ռեսուրսները, կարողությունների զարգացումը, տեխնիկական և գիտական համագործակցությունը, ինչպես նաև տեխնոլոգիաների հասանելիությունն ու փոխանցումն ապահովվում են Շրջանակի լիարժեք իրականացման նպատակով և արդարացիորեն հասանելի են բոլոր Կողմերի համար, հատկապես՝ զարգացող երկրների, մասնավորապես՝ նվազ զարգացած երկրների և փոքր կղզիային զարգացող պետությունների, ինչպես նաև անցումային տնտեսություն ունեցող երկրների համար:
- Միաժամանակ, աստիճանաբար կրճատվում է կենսաբազմազանության ֆինանսավորման տարեկան 700 միլիարդ ԱՄՆ դոլարի բացը, իսկ ֆինանսական հոսքերը համապատասխանեցվում են Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակին և կենսաբազմազանության վերաբերյալ 2050 թվականի տեսլականին:

Նկար 6. Զանգակ՝ գրանցված ՀՀ Կարմիր գրքում

Փաստ 6.

Կովկասի շուրջ 6000 բուսատեսակների կեսից ավելին՝ 3800 տեսակն, աճում է Հայաստանում:

Շրջանակի թիրախները մինչև 2030թ.

- ✓ 1-8 թիրախներն ուղղված են կենսաբազմազանության համար սպառնալիքների կրճատմանը:
- ✓ 9-13 թիրախներն ուղղված են մարդկանց կարիքների բավարարմանը կենսաբազմազանության կայուն օգտագործման և օգուտների բաշխման միջոցով:
- ✓ 14-23 թիրախներն ուղղված են իրականացման և ներդրման գործիքներին և լուծումներին:

2.4 CBD-ի օժանդակ և հիմնական մարմինները

CBD-ի օժանդակ մարմիններն են.

- **Գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվության օժանդակ մարմին (Subsidiary Body on Scientific, Technical and Technological Advice - SBSTTA)**

Նպատակն է ժամանակին խորհրդատվություն տրամադրել COP-ին և, ըստ անհրաժեշտության, դրա այլ օժանդակ մարմիններին՝ CBD-ի իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ:

SBSTTA-ն պարտավոր է կանոնավոր կերպով զեկուցել COP-ին իր գործունեության բոլոր ասպեկտների մասին: Այն կազմված է համապատասխան մասնագիտական ոլորտներում իրավասու պետական մարմինների ներկայացուցիչներից:

Այս մարմնի գործառույթներն են.

- կենսաբազմազանության վիճակի գնահատումների տրամադրումը

- CBD-ի դրույթներին համապատասխան ձեռնարկված միջոցառումների տեսակների գնահատումների տրամադրումը
- COP-ի կողմից մարմին ուղղված հարցերին արձագանքելը:

- **Իրականացման հարցերով օժանդակ մարմին** (Subsidiary Body on Implementation - SBI)՝ աջակցում է COP-ին՝ վերահսկելով և գնահատելով CBD-ի որոշումների և պարտավորությունների իրականացման ընթացքը երկրների կողմից: Այն կենտրոնանում է ռազմավարական պլանավորման, ֆինանսավորման, հաշվետվությունների և կարողությունների զարգացման վրա:

- **CBD-ի 8(j) հոդվածի և բնիկ ժողովուրդների ու տեղական համայնքների վերաբերյալ այլ դրույթների օժանդակ մարմին** (Subsidiary Body on Article 8(j) and Other Provisions of the Convention Related to Indigenous Peoples and Local Communities - SB8J)՝ լիազորված է խորհրդատվություն տրամադրել COP-ին, այլ օժանդակ մարմիններին և նրանց խնդրանքով Կարթագենայի և Նագոյայի արձանագրությունների COP-երին՝ բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների համար կարևոր հարցերի առնչությամբ:

CBD հիմնական կառավարման մարմին

ՄԱԿ-ի CBD-ի հիմնական կառավարման մարմինը COP-ն[7] **է:** Այն Կոնվենցիայի բարձրագույն որոշում կայացնող գլխավոր մարմինն է:

Փաստ 6.
Սևանա լիճն աշխարհի 2-րդ ամենամեծ բարձրադիր քաղցրահամ լիճն է՝ Տիտիկակա լճից հետո:

Նկար 6. Սևանա լիճ՝ Կովկասի քաղցրահամ ջրի ամենամեծ շտեմարան

[7] https://www.cbd.int/cop

3. COP-Ի ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

CBD-ի բոլոր կողմ պետությունները ներկայացված են COP-ում, որտեղ նրանք վերանայում են Կոնվենցիայի և COP-ի կողմից ընդունված ցանկացած իրավական փաստաթղթի իրականացումը և կայացնում են CBD-ի արդյունավետ իրականացումը խթանելու համար անհրաժեշտ որոշումներ՝ ներառյալ ինստիտուցիոնալ և վարչական կարգավորումները:

Մինչ օրս անցկացվել է COP-ի 16 սովորական և 2 արտահերթ նիստ: Նիստերն անցկացվում են յուրաքանչյուր երկու տարին մեկ: COP17-ը տեղի կունենա Երևանում (Հայաստան):

3.1 COP-ի որոշումների կայացման գործընթացը

CBD COP-ում որոշումների կայացումը հիմված է CBD COP-ի նիստերի ընթացակարգային պաշտոնական կանոնակարգի[8] վրա:

Որոշումների նախագծերի մշակում

- Նախքան COP-ը CBD-ի օժանդակ մարմինները՝ SBSTTA-ն, SBI-ը, մշակում են գիտական և տեխնիկական հիմքեր, ինչպես նաև որոշումների նախագծեր:
- Պաշտոնական փաստաթղթերը թարգմանվում են ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներով և հրապարակվում համաժողովից առնվազն 6-8 շաբաթ առաջ:

Համաժողովի աշխատանքային փուլեր

- **Լիագումար նիստեր**: COP-ը սկսվում և ավարտվում է լիագումար նիստերով, որտեղ ընդհանուր քննարկումներ են տեղի ունենում:
- **Աշխատանքային խմբեր:** Կախված օրակարգի բարդությունից՝ ստեղծվում են աշխատանքային խմբեր, որոնք կետ առ կետ քննարկում և վերջնական տեսքի են բերում որոշումների նախագծերը:

Որոշման կայացում

- **Կոնսենսուսի գերակայություն:** CBD-ի կանոնակարգի հիմական սկզբունքը բոլոր էական հարցերի շուրջ կոնսենսուսի (ընդհանուր համաձայնության) հասնելն է՝ առանց որևէ կողմի պաշտոնապես հայտարարված առարկության:
- **Վետոյի իրավունք**

  Եթե նույնիսկ մեկ երկիր պաշտոնապես դեմ է արտահայտվում, որոշումը չի ընդունվում:

[8] https://www.cbd.int/doc/legal/cbd-rules-procedure-en.pdf

3.2. Ովքեր են մասնակցում COP-ին և ինչ ձևաչափով

- **Պաշտոնական պատվիրակություններ (Կողմեր)**

Կոնվենցիան վավերացրած երկրների ներկայացուցիչներ՝ պետական այրեր, նախարարություններ, դիվանագետներ:

Միայն այս խումբն ունի պաշտոնական բանակցություններ վարելու և որոշումներ կայացնելու իրավունք:

- **Դիտորդներ (Observers)**

ՄԱԿ-ի կառույցներ, միջազգային և տեղական ՀԿ-ներ, բնիկ համայնքների, ակադեմիական հաստատությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Այս կազմակերպությունները պետք է ունենան պաշտոնական հավատարմագրում Կապույտ գոտում (Accreditation)[9] գրանցվելու համար: Նրանք իրավունք ունեն Կապույտ գոտում մասնակցելու բաց քննարկումներին, հանդես գալու հայտարարություններով, կազմակերպելու հարակից միջոցառումներ (Side Events) և ցուցահանդեսներ, սակայն չունեն քվեարկելու իրավունք: Անհատները չեն կարող գրանցվել որպես դիտորդ, անհրաժեշտ է ինստիտուցիոնալ պատկանելություն:

3.3 Կապույտ և Կանաչ գոտիներ

- COP-ը կազմակերպվում է երկու հիմական՝ Կապույտ (Blue Zone) և Կանաչ (Green Zone) գոտիների միջոցով:

Կապույտ գոտի (Blue Zone)

- Սա համաժողովի պաշտոնական և դիվանագիտական բանակցային հիմական տարածքն է: Այն կառավարվում և վերահսկվում է անմիջականորեն CBD-ի քարտուղարության կողմից: Մուտքը խիստ սահմանափակ է և պահանջում է հատուկ հավատարմագրում: Այստեղ հավաքվում են անդամ երկրների պաշտոնական պատվիրակությունները՝ պետությունների ղեկավարներ,

[9] https://www.cbd.int/notifications/2026-041?fbclid=IwY2xjawRuiNtleHRuA2FlbQIxMABicmlkETFYQlJiQzdTQW1lZDhKU21pc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHsOogz1mK3za8vkJIrbPAUnpVCOEQPH8G9fDMusN2O_njJgAnHiddKhQXw6i_aem_3UlOmjOYaDrcL8yITq7Z6A#_ftn1

նախարարներ, ինչպես նաև ՄԱԿ-ի և լիազորված դիտորդ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

- Այստեղ անցկացվում են բուն բանակցությունները, լիագումար նիստերը, բարձր մակարդակի հանդիպումները և պաշտոնական միջոցառումները, ընդունվում են կոնվենցիայի բոլոր 196 անդամների համար պարտադիր որոշումները:

Փաստ 7
Բնության հատուկ պահպանվող տարածքները կազմում են Հայաստանի Հանրապետության տարածքի 13,1%-ը:

Նկար 7. ՀՀ Տավուշի մարզ, «Դիլիջան» ազգային պարկ

Կանաչ գոտի (Green Zone)

- Սա հանրային և սոցիալական մոբիլիզացիայի գոտին է, որը նախատեսված է հասարակության լայն շերտերի համար:
- Կազմակերպվում և համակարգվում է համաժողովը հյուրընկալող երկրի (նախագահող երկրի) կողմից:
- Այն նախագահող երկրի կողմից գրանցումով նախատեսված է քաղաքացիական հասարակության, հետազոտողների, ուսանողների, մասնավոր հատվածի համար:
- Կանաչ գոտին ծառայում է որպես հարթակ ցուցահանդեսների, երիտասարդական ֆորումների, մշակութային միջոցառումների, ինտերակտիվ ծրագրերի և պանելային քննարկումների համար: Այստեղ տարբեր կազմակերպություններ կիսվում են բնության պահպանության իրենց տեսլականով և փորձով:

3.4. COP-երին մասնակցության մեխանիզմներ ՔՀԿ-ների, համայնքների, բնիկ ժողովուրդների, երիտասարդների, կանանց և այլ շահագրգիռ կողմերի համար

Հաշվի առնելով, որ ոչ բոլորը կարող են մասնակցել COP-երին Կապույտ գոտում և հաշվի առնելով COP-երի տարբեր երկրներում անցկացնելու հանգամանքը՝ CBD-ն ստեղծել է խմբեր՝ համակարգելու տարբեր խմբերի և լսելի դարձնելու նրանց ձայնը COP-երի ժամանակ: Ստեղծվել է 9 խումբ, որոնք՝ գրեթե բոլորը, ունեն միջազգային համակարգող կամ ներկայացուցիչ, ովքեր հիմնականում այդ խմբերին ներկայացնում են COP-երի ընթացքում:

Այդ խմբերը սահմանվել են 1992թ.՝ Օրակարգ 21-ի համաձայն:

1. Բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների ներկայացուցիչների համար՝ **Կենսաբազմազանության հարցերով բնիկ ժողովուրդների միջազգային ֆորում**[10] (The International Indigenous Forum on Biodiversity (IIFB))
2. **Կանանց համար՝ CBD կանանց համակարգող խումբ**[11] (CBD Women Caucus)
3. **Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի գիտական և տեխնոլոգիական համայնք** (ակադեմիա)[12] (Scientific and Technological Community (Academia))
4. **Ոչ կառավարական կազմակերպությունները**[13] (Non-Governmental Organizations (CBD Alliance)
5. **Երեխաները և երիտասարդները** (Global youth biodiversity forum)[14]
6. **Աշխատավորները և առևտրային միավորումները**[15] (Workers and Trade Unions)
7. **Տեղական իշխանությունները**[16] (Local Authorities)
8. **Ֆերմերները** (Farmers)
9. **Բիզնեսը և արդյունաբերությունը** (Business and Industry):

[10] https://iifb-indigenous.org/about-us/
[11] https://cbdwomenscaucus.org/
[12] https://www.cbd.int/cooperation/whole/science.shtml
[13] https://www.cbd-alliance.org/en
[14] https://gybn.org/
[15] https://www.cbd.int/cooperation/whole/Parliamentarians.shtml?utm_source=chatgpt.com
[16] https://www.global-taskforce.org/local-authorities-major-group

Միայն COP17-ի պաշտոնական հարթակներում չէ, որ հնարավոր է գտնել քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը: Կարևոր է հետևել նաև նշված խմբերի կայքերին և սոցիալական հարթակներին, քանի որ դրանք հաճախ կազմակերպում են կողմնակի միջոցառումներ, հավաքագրում կամավորներ կամ հայտարարում դրամաշնորհային ծրագրեր:

4. ԵՐԵՎԱՆՅԱՆ CBD COP17

ՄԱԿ-ի CBD COP17-ն անցկացվելու է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում՝ Երևանում, 2026թ. հոկտեմբերի 19-30-ին: Միաժամանակ կանցկացվեն Կարթագենայի արձանագրության կողմերի 12-րդ (CP-MOP-12) և Նագոյայի արձանագրության կողմերի 6-րդ (NP-MOP-6) հանդիպումները:

ՄԱԿ-ի CBD COP17-ի կարգախոսն է՝ **«Գործելով հանուն բնության»:** Այն շեշտադրում է նախաձեռնություններից դեպի նպատակային և համակարգված գործողությունների անցման կարևորությունը:

COP17-ի պաշտոնական տարբերանշանի հիմքում ընտրվել է Երևանյան կապտաթիթեռը՝ Հայաստանի լեռնաշխարհին բնորոշ կարմիրգրքյան էնդեմիկ տեսակ:

Նկար 8. COP17-ի պաշտոնական տարբերանշան

Նկար 9. Երևանյան կապտաթիթեռ

COP17-ի վիզուալ ինքնությունը ձևավորված է թիթեռի կենսաշրջանի գաղափարի շուրջ՝ ձու, թրթուր, պատյան և թռիչք, ինչը նույնականացվում է բնական համակարգերի շարունակականության, բազմազանության ու վերականգնման կարողության հետ: Թիթեռի ուրվագիծը կազմված է 23 գույնից, որոնք ներկայացնում են Կունմին-Մոնրեալի

կենսաբազմազանության գլոբալ շրջանակի 23 թիրախները, ինչպես նաև մեկ հիմնական կապույտ գույնից՝ խորհրդանշելով թիթեռի ինքնությունը:

Երևանյան COP-ի **Կապույտ գոտին** գտնվելու է Մերիդիան էքսպո կենտրոնում (Հասցե՝ Երևան, Ոսկերիչների 1):

Նկար 9. Մերիդիան էքսպո կենտրոն

Երևանյան COP-ի **Կանաչ գոտին** գտնվելու է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում (Հասցե՝ Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1 շենք):



Նկար 9. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր

4.1 Ինչ կքննարկվի երևանյան CBD COP17-ում

CBD COP17-ին Հայաստանում կքննարկվի 51 փաստաթուղթ, որոնցից ամենակարևորը Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի իրականացման առաջին Գլոբալ վերանայումն է (Global Review): Ակնկալվում է, որ CBD COP17-ը կվերածի այս վերանայման արդյունքները գործնական ուղեցույցների՝ մինչև 2030 թվականը գլոբալ հավակնությունների արագացված իրականացումն ապահովելու համար:

COP17-ի չորս հիմնական առաջնահերթություններն են.

1. **Գլոբալ վերանայում՝** իրականացման առաջընթաց և հաշվետվողականություն

2. Ֆինանսներ և թվային գենետիկական հաջորդականության տվյալներ՝ ֆինանսավորում, Կալի հիմադրամ (Cali Fund) և օգուտների բաշխում

3. Մասնակիցներ՝ բնիկ ժողովուրդներ, համայնքներ և շահառուներ

4. Սիներգիա՝ կենսաբազմազանություն, կլիմա, հողեր, ջուր

COP17-ի ընթացքում նախատեսված է 7 զուգահեռ միջոցառում.

- Բիզնես և կենսաբազմազանություն ֆորում (հոկտեմբերի 25)
- Բնություն և մշակույթ գագաթնաժողով (հոկտեմբերի 24-25)
- Երիտասարդական ֆորում (հոկտեմբերի 17-18)
- Գիտություն-քաղաքականությունը կենսաբազմազանության համար ֆորում (հոկտեմբերի 24-25)
- Ենթաազգային կառավարությունների և քաղաքների գագաթնաժողով (հոկտեմբերի 24)
- Կանանց ֆորում (հոկտեմբերի 27)
- Ֆինանսների օր։

Նախատեսված են նաև թեմատիկ օրեր[17]

- Օտարածին՝ ինվազիվ տեսակներ (հոկտեմբերի 24, 09:00-13:00)
- Ջուրը և կենսաբազմազանությունը (հոկտեմբերի 24, 14:00-18:00)
- Օվկիանոս (հոկտեմբերի 24, 18:30-20:00)
- Թիրախ 3 (30x30) (հոկտեմբերի 25, 09:00-18:00)
- Փոխակերպող փոփոխություններ (հոկտեմբերի 25, 18:30-20:00)

[17] https://www.cbd.int/conferences/2026/parallel-meetings/gbf-pavilion

- Լեռնային էկոհամակարգեր (հոկտեմբերի 26, 09:00–18:00)
- Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի (NBSAP) իրականացման արագացում (հոկտեմբերի 27, 09:00-13:00)
- Կրթություն (հոկտեմբերի 27, 14:00–18:00)
- Գյուղատնտեսություն և պարենային համակարգեր (հոկտեմբերի 28, 09:00–18:00)
- Էկոհամակարգերի վերականգնում (հոկտեմբերի 29, 09:00–18:00):

COP17-ի նախնական օրակարգ

1. Համաժողովի բացում
2. Կազմակերպչական հարցեր
3. CBD COP17-ում ներկայացուցիչների լիազորությունների վերաբերյալ զեկույց
4. Չկարգավորված հարցեր
5. COP-ի ապագա նիստերի անցկացման ժամկետներն ու վայրը
6. Միջնստաշրջանային և տարածաշրջանային նախապատրաստական հանդիպումների զեկույցներ
7. CBD-ի վարչական ապահովումը, նպատակային հիմնադրամների բյուջեն և քարտուղարության գործառութային վերանայում
8. Ռեսուրսների մոբիլիզացում և ֆինանսավորման մեխանիզմ.

   ա) ռեսուրսների մոբիլիզացում

   բ) ֆինանսավորման մեխանիզմ

9. Պլանավորում, մոնիթորինգ, հաշվետվողականություն և վերանայում.

   ա) Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի իրականացման հավաքական առաջընթացի գլոբալ գնահատում

   բ) Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի մոնիթորինգի մեխանիզմ

10. CBD-ի 8(j) հոդվածի և բնիկ ժողովուրդներին ու տեղական համայնքներին վերաբերող այլ դրույթների իրականացում.

ա) CBD-ի 8(j) հոդվածի և բնիկ ժողովուրդներին ու տեղական համայնքներին վերաբերող այլ դրույթների իրականացման օժանդակ մարմնի աշխատակարգ

բ) 8(j) հոդվածի և բնիկ ժողովուրդներին ու տեղական համայնքներին վերաբերող այլ դրույթների աշխատանքային ծրագրի իրականացումը մինչև 2030 թվականը.

(i) ուղեցույցներ՝ Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի 2-րդ և 3-րդ նպատակների իրականացման համար իրավական և քաղաքական հիմքերի ամրապնդման վերաբերյալ, այդ թվում՝ բնիկ ժողովուրդների տարածքներում և ավանդական տարածքներում՝ բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների առաջնորդությամբ իրականացվող պահպանության և վերականգնման միջոցառումները խթանելու նպատակով (խնդիր 1.1), ինչպես նաև ուղեցույցներ՝ տարածական պլանավորման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում ավանդական հողօգտագործման և այլ բնական ռեսուրսների օգտագործման հարցերի ներառման վերաբերյալ (խնդիր 1.2),

(ii) CBD-ի 8(j) հոդվածի և համապատասխան դրույթների համատեքստում կիրառվող հիմնական տերմինների և հասկացությունների կամավոր բառարանի վերանայման և թարմացման գործընթացը (խնդիր 5.4),

գ) խորացված երկխոսություն 8(j) հոդվածի և Կոնվենցիայի համապատասխան դրույթների իրականացման վերաբերյալ,

դ) բնիկ ժողովուրդների հարցերով մշտական ֆորումի հանձնարարականները,

11. Գենետիկական ռեսուրսներին վերաբերող հաջորդականությունների թվային տեղեկատվություն (Digital Sequence Information, DSI),

12. CBD-ի և Կունմին–Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի իրականացմանն աջակցող մեխանիզմներին և դրանց մասին իրազեկմանը վերաբերող հարցեր.

ա) կարողությունների ստեղծում և զարգացում, ինչպես նաև գիտատեխնիկական համագործակցություն

բ) տեղեկատվության փոխանակման մեխանիզմ և գիտելիքների կառավարում

գ) հաղորդակցություն, կրթություն և հանրային իրազեկում

13. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների և այլ կոնվենցիաների շրջանակներում ստեղծված մարմինների հետ

14. Կենսաբազմազանության հարցերի ներառում և համագործակցություն ենթազգային մակարդակի կառավարությունների հետ.

ա) կենսաբազմազանության հարցերի ներառում տարբեր ոլորտներում և ոլորտների միջև

բ) համագործակցություն ենթազգային կառավարությունների, քաղաքային և այլ տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ Կունմին–Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի իրականացումն ակտիվացնելու նպատակով:

15. Գենդերային հավասարության ապահովման գործողությունների ծրագիր

16. Սինթետիկ կենսաբանություն

17. Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի իրականացմանն աջակցելու համար անհրաժեշտ գիտական և տեխնիկական կարիքները, ինչպես նաև Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակի (IPBES) աշխատանքային ծրագրին առնչվող հարցեր.

ա) CBD-ի շրջանակներում իրականացվող աշխատանքային ծրագրերի ռազմավարական վերանայում և վերլուծություն՝ Գլոբալ շրջանակային ծրագրի համատեքստում,

բ) անտառների կենսաբազմազանության վերաբերյալ ընդլայնված աշխատանքային ծրագրի ռազմավարական վերանայում և թարմացում,

գ) պահպանվող տարածքների աշխատանքային ծրագրի ռազմավարական վերանայում և թարմացում,

դ) Գլոբալ շրջանակային ծրագրի համատեքստում հետագա հնարավոր գործունեության ուղղություններ,

ե) Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների Միջկառավարական հարթակի (IPBES) աշխատանքային ծրագրին վերաբերող հարցեր։

18. Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակային ծրագրի իրականացման հետ կապված այլ գիտական և տեխնիկական հարցեր.
ա) կենսաբազմազանություն և կլիմայի փոփոխություն,

բ) վայրի բնության ռեսուրսների կայուն կառավարում,

գ) ծովային և առափնյա կենսաբազմազանություն, կղզիների կենսաբազմազանություն,

դ) կենսաբազմազանություն և գյուղատնտեսություն,

ե) ինվազիվ օտար տեսակներ,

զ) կենսաբազմազանություն և առողջություն։

19. CBD-ի և դրան կից արձանագրությունների շրջանակներում իրականացվող գործընթացների արդյունավետության վերանայում

20. Կողմերի համաժողովի բազմամյա աշխատանքային ծրագիր

21. Այլ հարցեր

22. Զեկույցի ընդունում

23. Համաժողովի փակում

4.2. Երևանյան CBD COP17-ին մասնակցության համար գրանցում և հավատարմագրում

Կապույտ գոտի

Կապույտ գոտում CBD COP17-ին մասնակիցների գրանցումն ամբողջությամբ իրականացվում է ՄԱԿ-ի CBD-ի քարտուղարության կողմից:

ա) Առաջադրումներ - Հավատարմագրված կազմակերպություններ

Կենսաբազմազանության կոնվենցիայի նիստերին որպես դիտորդ արդեն հավատարմագրված կազմակերպությունների ներկայացուցիչների գրանցման համար անհրաժեշտ է պաշտոնական նամակ ուղարկել CBD-ի գործադիր քարտուղարին, որում նշված կլինեն կազմակերպության պատվիրակության անունները և կոնտակտային տվյալները, ինչպես նաև հստակ նշված կլինի հանդիպման կամ հանդիպումների վերնագիրը, որոնց նրանք ցանկանում են մասնակցել: Նամակը պետք է քարտուղարություն ուղարկվի secretariat@cbd.int էլեկտրոնային հասցեով մինչև **2026 թվականի սեպտեմբերի 15-ը:**

բ) Որպես դիտորդ հավատարմագրվելու ընթացակարգ

Դիտորդի հավատարմագրում ստանալու համար կազմակերպության դիմումը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը՝

1. Կազմակերպության պաշտոնական նամակ՝ հավատարմագրում ստանալու և կոնվենցիայի հանդիպումներին մասնակցելու մասին:

Նամակը պետք է

- գրված լինի կազմակերպության բլանկի վրա և ստորագրված լինի կազմակերպության ղեկավարի կողմից
- ներկայացնի կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման հետ կապված ոլորտներում կազմակերպության որակավորումը:

- պարունակի հստակ խնդրանք, թե որ հանդիպմանը կամ հանդիպումներին են ցանկանում կազմակերպության ներկայացուցիչները ներկա լինել (պետք է նշվի հանդիպման կամ հանդիպումների անվանումը),
- նշված լինեն կազմակերպության ներկայացուցիչների անունները և կոնտակտային տվյալները։

2. Կազմակերպության կանոնադրության կամ լիազորությունների պատճենը, որը ցույց է տալիս կազմակերպության օրինականությունը որպես իր հայրենի երկրում ստեղծված բարեխիղճ կազմակերպություն, Կանոնադրության անգլերեն թարգմանությունը՝ կնքված լիցենզավորված թարգմանչի կողմից։

3) Կազմակերպության գրանցման/հիմնադրման վկայականի պատճենը, որը տրվել է կազմակերպության գտնվելու վայրի պետական մարմնի կողմից։

4. Կենսաբանական բազմազանության պահպանման և կայուն օգտագործման հետ կապված ոլորտներում կազմակերպության որակավորումը հաստատող հայտարարություն։

5. Կայքի հասցե

6) Ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն։

Նամակը և ուղեկցող փաստաթղթերը պետք է քարտուղարություն ներկայացվեն էլեկտրոնային փոստով՝ secretariat@cbd.int հասցեով մինչև **2026 թվականի օգոստոսի 31-ը:**

Կանաչ գոտի

Կանաչ գոտում CBD COP17-ին մասնակիցների գրանցումն ամբողջությամբ իրականացվում է COP17-ը նախագահող և հյուրընկալող երկրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից https://cop17yerevangreenzone.com/am/ կայքի միջոցով։

Կանաչ գոտու մասնակցության ձևաչափերը հետևյալն են՝

1. Ցուցահանդեսի մասնակիցներ և տաղավարներ

Կանաչ գոտու ցուցահանդեսային գոտին կարող է հյուրընկալել շուրջ 100 տաղավար, որոնք կարող եք ամրագրել հետևյալ հղումով՝ https://www.cop17yerevangreenzone.com/am/registration-information/exhibitor

- ✓ **Ստանդարտ տաղավարի չափսեր.** ստանդարտ ցուցահանդեսային մակերեսը կազմում է 3×3 մ, սակայն հասանելի են ավելի մեծ կամ անհատականացված ձևաչափերը ըստ ձեր պահանջի:
- ✓ **Ֆինանսական պայմաններ.** 3x3 տաղավարի ամրագրման վճարը կազմում է 1,440,000 ՀՀ դրամ (ներառյալ բոլոր կիրառելի տեղական հարկերը), որը ծածկում է Կանաչ գոտու միջոցառման ամբողջ ժամանակահատվածը՝ 2026 թվականի հոկտեմբերի 19-30-ը:
- ✓ **Դիմում և ուղեցույցներ.** հետաքրքրված կազմակերպությունները կարող են ծանոթանալ տեխնիկական մանրամասներին և առցանց ներկայացնել իրենց հայտերը կայքի միջոցով:

2. Աշխատաժողովների սրահներ և նիստերի ամրագրումներ

Ակտիվ երկխոսությունը, կարողությունների զարգացումն ու գիտելիքների փոխանակումը խթանելու նպատակով Կանաչ գոտին տրամադրում է 50 անձանց համար նախատեսված աշխատաժողովների սրահներ և սեսիաների համար նախատեսված դահլիճ:

- ✓ **Սեսիաների ձևաչափ.** սեսիաները (պանելային քննարկում, սահիկաշարի ներկայացում, պաշտոնական մեկնարկի հայտարարություն, զեկույց և այլն) պետք է կենտրոնացած լինեն բնության պաշտպանությանն ուղղված գործողությունների համատեքստում լուծումների և նախագծերի վրա:
- ✓ **Ամրագրման գործընթաց.** շահագրգիռ կողմերը կարող են ամրագրել իրենց սեսիան առցանց՝ https://www.cop17yerevangreenzone.com/am/registration-information/session-submission: Տարածքների բաշխումն իրականացվում է ըստ թեմատիկ համապատասխանության և հայտի ներկայացման ամսաթվի առաջնահերթության: Աշխատաժողովների սրահները և դահլիճը տրամադրվում են անվճար:

3. Մշակութային գործընկերներ

Գիտակցելով արվեստի, բնիկ ժողովուրդների ժառանգության և հանրային ներկայացումների վճռորոշ դերը բնապահպանական հարցերում՝ Կանաչ գոտին ունի առանձնացված տարածքներ գեղարվեստական արտահայտման, պատմությունների ներկայացման և մշակութային ցուցադրությունների համար:

- ✓ **Զնաչափ.** մշակութային գործընկերները կարող են առաջարկել ներկայացումներ, վիզուալ արվեստի տեղադրումներ կամ ինտերակտիվ ցուցադրություններ, որոնք արտացոլում են տարածաշրջանային կենսաբազմազանության պատմությունները և այլ բնապահպանական թեմաներ:
- ✓ **Հայտերի ներկայացում.** արվեստագետները և մշակութային կազմակերպությունները կարող են ուղարկել իրենց առաջարկներն ու տեխնիկական պահանջները https://www.cop17yerevangreenzone.com/am/register-now/translate-to-armenian-cultural-program հղումով:

***

Օտարերկրյա հյուրերի համար վիզաների, ճամփորդության, տրանսպորտի, կեցության, կապի միջոցների Հայաստանում ավտոմեքենա վարելու կարգի և այլ հարցերի պատասխաններ կարելի է գտնել https://cop17yerevangreenzone.com/am/ կայքում:

5. ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

https://www.cbd.int/

https://www.cbd.int/meetings/COP-17

https://cop17yerevan.am/

https://www.cop17yerevangreenzone.com/am/

https://www.facebook.com/cop17armenia